

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են
խմբագրանիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թվին

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերէն:
Լրագրի գիրքը և պրօգրամման նորն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԼԿԱՆ ՀԵՌԵՐԻՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ:
ԸՄԵՆՁԻՆ ՀԵՄԵՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատու: Օտար քաղաքներից պէտք է գիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“.
Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Նոր ընտրված Դումա:—Ներքին տեսու-
թիւն: Նամակ Մոսկովայից: Նամակ Ախալքա-
լաքից: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:
—Արտաքին տեսութիւն: Քաղաքական
տեսութիւն: Արտաքին լուրեր:—(Մշակ) հեռա-
գիրներ:—Յայտարարութիւններ:—Տեղեկացոյց:
—Ֆելիետոն:
ՆՈՐ ԸՆՏՐՎԱԾ ԴՈՒՄԱ
Պէտք է խոստովանվել որ նոր
ընտրված Թիֆլիսի Դուման շատ

ՖԵԼԵՏՈՆ
«Մշակ» մասին գաղափարներ:—Տասն և
հինգ օրվայ արձակուրդը:—Թշնամիներ և բարե-
կամներ:—Ինչի «Մշակը» տասն և հինգ օր չէ
հրատարակվում:—Հայկ յառույթներ:—Լրա-
գրական և բեմական գործ:—Լաւ է ուշ քան
թէ երբեք:—Իմ բարեմադլութիւնները նոր
տարվայ համար:—(Մշակ) խմբագիր:—(Փորձ):
—Ս. Էջմիածնի ակադէմիա:—Վրաց (Բրեքստ)
լրագիրը:—(Օճօր) լրագիրը:—Ներսիսեան դը-
պրտը:—Պերճ Պառնիսանց:—Ս. Պ. Ալադաթով:
Թիֆլիսի Դուման:—Պալիգրաֆայան քահանայն:
—(Մշակ) լրագիրը:—Ներսիսեան դը-
պրտը:—Գարրիէ Ստուդիականց:—Մեր բժշկները:
—Կենդանիների հովանաւորութեան ընկերութիւնը:
—Թիֆլիսի չքաւոր աղքատակութիւնը:—Հին-
բարեկամ, կասկածի և ուրիշ թղթակցներ:
—Նիկողոսեանց և Ուսուցիչ:—Թիֆլիսի հայերը:
—(Մշակ) լրագիրը:—Թատրոն:—Թիֆ-
լիսի ցէնզորները:—Հայ երիտասարդներ և հայ
օրիորդներ:—Կ. Պոլսի հայոց լրագրութիւնը:
—Ռուսաստանի հայոց լրագրութիւնը:—Բազուի
Մարդասիրական ընկերութիւնը:—Թիֆլիս քա-
ղաքը և համայնարարը:—Մեր օրիորդական դը-
պրտները և կլասիկային գիմնադիւնները:—Հա-
յոց աղքատ:—Ինտելիգենցիա:—Կրկին «Օճօր»
լրագիրը:—Իմ յոյսերը:—Դեռ չը յայտնված
ցանկութիւններ:—Ինչի ֆելիետոնս կարծ եղաւ:
—Նոր տարվայ վիզիտները:—Միւս տարվայ
համար խորհուրդս:
«Մշակը» ոչինչ չը չինեց, հաւատացնում են
շատերը, ինչ արաւ «Մշակը» եթէ տարի շարու-
նակ, հարցնում են հեղինակն ձեռք մի քանի
ինքնահաւան անգործներ, «Մշակը» կատարեալա-
պէս փնտաւար մի լրագիր է, ասում են օճի
սիրտ ունեցող նախանձի հերոսներ...
Բայց ահա «Մշակը» 15 օր չէ հրատարակվում,

ընտրելու խնդիրը, բանկային գոր-
ծողներից մին, այն է պ. Ղամբարով, Թիֆլիսի առևտրական
բանկի կառավարիչ, առաջարկեց
որ քաղաքագլուխ ընտրելու, կամ
աւելի լաւ է ասել, այդ պաշտօնի
համար կանդիդատներ որոշելու
համար, Դուման նշանակի դըռ-
նափակ նիստեր:
Եւ այդ առաջարկութիւնը ըն-
դունվեցաւ Դումայից:
Եւ դ նիստերը սկսվեցան յուն-
վարի 16-ից:
Բանկային գործակաւարու-
թեան մէջ բանկերի խորհուրդնե-
րի գաղտնի և դժնափակ նիստե-
րը հասկանալի են: Եւստեղ խո-
սում են Ֆինանսական կամ դրա-
մական այնպիսի օպերացիաների
վրա, որոնց մասին շատ անգամ,
կամ մեծ մասամբ, —եթէ չասենք
միշտ, —բանկային ֆինանսիստնե-
րը չեն ցանկանում որ հասարա-
կութիւնը տեղեկութիւն ունենայ:
Ֆինանսական օպերացիաները
հասարակութենից գաղտնի պա-
հելը, —դա դեռ հասկանալի բան
է:
շատ շատ մի հարկւր բաժանորդ: Չեղ եմ հարց-
նում, ինչքան օրինակ տպել տանք տպարանում
200, 500, թէ 2000...
Ի հարկէ ընթերցողը կասէ՝ շատ տպեցէք,
մեղ ինչ որ դուք աւելորդ ծախս կանէք...
Հայր ինքն ոչինչ չէ անում, առհասարակ իսկ
այն մարդուց որ մի բան անում է, պահանջում
է աւելի քան թէ նա կարող է անել:
Մի մարդ լրագիր է հրատարակում, թող իր
փողերը ծախսի, թող ոչինչ օգուտ չունենայ,
թող հարկաւոր ժամանակ արտակարգ ծախսեր
էլ անի ու պարտքերի մէջ խրվի, ասում է հայը
մեղ ինչ փողով: Եւ այնու ամենայնիւ այդ տե-
սակ մարդուն օր իրանից ամեն տարի մի քանի
հազար ռուբլու դեֆիցիտ է ծածկում, մենք նը-
բան հարստահարող ենք անուանում: Նա
իր կենքեր բարոյական և մտաւոր ամբողջ ոյ-
մերը լրագրի գործին նուիրում է, բայց այնու
ամենայնիւ մենք նրան հարստահարող ենք
անուանում...
Մի մարդ թատրոնական պիէսա է գրում,
թատրոնական խումբը ներկայացնում է այդ
պիէսան, փող է վաստակում, հեղինակին ոչինչ
չէ վճարում, պահանջում է որ ներկայացման
ժամանակ լոճայի համար էլ հեղինակը վճարէ, —
և վերջը հեղինակին էլի հարստահարող է անուա-
նում...
Հասկացե՛ք, ուրեմն, ընթերցողներ, ինչի «Մշ-
ակը» 15 օրով ուշանում է ամեն տարի:
Թէ «Մշակը» այսքան ուշացաւ, բայց այնու
ամենայնիւ ես կարող եմ բարեմադլել մեր ըն-
թերցողներին և ամբողջ ազգին բաղդաւոր
նոր տարի: Լաւ է ուշ քան թէ երբեք, ասում
է առածը:

Բայց մեր կարծիքով նոյն բան-
կային պրակտիկա մտցնել հա-
սարակական, քաղաքային գոր-
ծերի մէջ անյարմար է, եթէ ա-
ւելի չասենք:
Քաղաքային գործերի իւրաքան-
չեւ խնդիրը, քաղաքային վար-
չութեան անդամների, քաղաքի
ներկայացուցիչների իւրաքանչեւ
քայլը պէտք է հրապարակական
լինեն, պէտք է ենթարկվեն քա-
ղաքի բնակիչների, ընտրողների,
եթէ չասենք օրինական, գոնէ
բարոյական ըննադատութեանը:
Չարմանում ենք որ Դուման
ընդունեց պ. Ղամբարովի այդ
տեսակ առաջարկութիւն: Չար-
մանում ենք որ ձայնաւորների
թւում գտնված տեղական մամու-
լի ներկայացուցիչները, որոնք ա-
մեն առիթից օգուտ են բաղում,
որ իրանց ցոյց տան հասարակա-
կան արդարութեան պաշտպան-
ներ, չը բողբեցին այդ բուն բան-
կային պրակտիկայի դէմ:
Մի այնպիսի նշանաւոր գործի
մէջ ինչպէս քաղաքագլուխ ըն-
տրութիւնն է, չէ կարելի անտես

Բայց որովհետեւ «Մշակը» կօմպոզիտական
լրագիր է, և ես էլ նրա աշխատակիցն եմ, —
այդ պատճառով ես չեմ կարող բաւականաւա-
մբայն հայերին բաղդաւոր նոր տարի բարեմադ-
լելով, այլ կը բարեմադլեմ նրան իմ բոլոր
ծանօթներին և անծանօթներին:
Եւ որովհետեւ բարեմադլութիւնների ժամա-
նակ ընդունված է միշտ դանազան ցանկութիւն-
ներ անել, ես էլ ամեն մէկին, մի մի ցանկու-
թիւն կը յայտնեմ:
«Մշակ» խմբագրին ցանկանում եմ այս տա-
րի չորս հազար ռուբլուց աւելի դէֆիցիտ ունե-
նալ: Նրա հախ է... թող վերջապէս հաս-
կանայ որ հայոց լրագիր հրատարակելը մի և
նոյն է որ ջուր մաղելը:
«Փորձ» ամսագրին ցանկանում եմ որ ամե-
ն օր եւ այ հրատարակութիւն դառնայ, որովհետեւ
քանի նա շուտ շուտ կը հրատարակվի՝ այնքան
թիւ կը կարգաւթի:
Ս. Էջմիածնի ակադէմիային ցանկանում
եմ, որ վերջապէս հասկանայ թէ ուրիշ բան չէ
կարող դառնալ, բացի ծախս կարողից:
Վրաց (Բրեքստ) լրագրին, որ այդքան սիրում
է հայերին, ցանկանում եմ որ հայերէն լեզուով
հրատարակվի, որ գոնէ հայերը կարողանային
հասկանալ թէ ինչպէս է հայոցում նրանց վրաց
լրագիրը: Եթէ ոչ, «Բրեքստ» յօդուածները
հաղանալու համար անպատճառ հարկաւոր է
որ «Օճօր» լրագիրը նրանց թարգմանի:
«Օճօր» լրագրին ցանկանում եմ որ հրատա-
րակվի արաբական տառերով և թուրքերէն լե-
զուով: Այդ կուտուրական տառերը և այդ կու-
տուրական լեզուն բոլորովին յարմար են, իմ
կարծիքով, ուստի լրագրի լայն, ընդարձակ, հա-
մամարդկային զաղափարներին:

առնել հասարակական կարծիքը, անտես առնել, կամ դիտմամբ հեռացնել մամուլի ներկայացուցիչներին անգամ:

Թող չը մոռանան պ. պ. ճայնաւորները որ երեք տարի առաջ տեղական մամուլը աւելի էր հետաքրքիր քաղաքային գործերով, աւելի էր գործում քաղաքապետի ընտրութեան գործի մէջ, քան թէ նոյն իսկ ճայնաւորները, որոնց նա սթափեցրեց իրանց քրնած դրութեան:

Այդ բանը գոնէ չը պէտք է մոռանային մամուլի այն ներկայացուցիչները, որոնք այս անգամ իրանք ճայնաւորներ դարձան:

Մենք կարծում ենք որ Դուան գոնէ պէտք է հրաւիրէր իր գոնափակ նստերին, որպէս լուսհանդիսատեսներ, տեղական մամուլի այն ներկայացուցիչներին, որոնք այս կամ այն պատճառով չը մոռան նոր Դուանյի կազմակերպութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱ

8 յունվարի

Երեանից հաղորդել էին «Մշակին», որ բժիշկ պ. Տեր-Գրիգորեանցը գնացել է Էջմիածին ընդունելով ճեմարանում բնական գիտութեան ուսուցչի պաշտօն, հաղորդում ենք և մենք այստեղից, որ ֆիլոսոֆիայի կանդիդատ պ. Սարգսեանցը օրերումս ուղևորվեց դէպի Էջմիածին ճեմարանում հին լեզուների ուսուցչի պաշտօնով:

Ներսիսեան գործընթացն ցանկանում էր որ այսուհետև միշտ առանց տեսչի մնայ և բոլոր այն անձերին որոնք անընդունակ յայտնվեցան տեսչի պաշտօնը վարելու, վարժապետական պաշտօններ տայ և նշանակի նրանց տեսչական ռոմբիկը:

Պերճ Պոստանցի ցանկանում էր այնքան երկար բռնաներ գրել, որ ոչ ոք համբերութիւն չունենայ նրա գրվածները մինչև վերջը կարդալ:

Սիմէոն Պետրովիչ Ալազաթ օվեր ցանկանում էր որ Թիֆլիս քաղաքի քաղաքագլուխ ընտրվի:

Թիֆլիսի Դոմային ցանկանում էր նրա նիստերի ժամանակ ամենից շատ խօսել խաբազով և Նիկոլայ ձայնաւորները:

Պալիգալ ֆայեան քահանային ցանկանում էր որ էլ երբեք ոչ մի ժամացոյց ընծայ չը ստանայ:

«Արարատ» ամսագրին, որ այժմ հայր Ստէփանէի խմբագրութեամբ է հրատարակվում, ցանկանում էր որ օրքան կարելի է Միւլլերի աղօթքները շատ ապկեն նրա էջերի մէջ:

«Մշակ» թշնամիներին ցանկանում էր որ «Մշակը» օրը երկու անգամ հրատարակվի:

Գաբրիէլ Սուրբուհի Կանյիցին ցանկանում էր որ նրա թշնամիները միշտ վեր առնի նրա բոլոր պիէսները և առանց նրա գիտութեան թարգմանի նրանց հայոց գրական լեզուով:

Մեր բժշկներին ցանկանում էր որ երբեք ոչ ոք չը հիւանդանայ, որպէս զի նրանք զուարճութիւն չունենան մարդկանցին չարաբարելու:

Կենդանիներին հովանաւորութեան թիֆլիսի ընկերութեանը ցանկանում էր որ աւելի մտածի երկուտանան, քան թէ չորստուանի կենդանիների պաշտպանութեան մասին:

Այս երկուքը երկու կողմից էլ ուրախալի է. առաջինը նա ցոյց է տալիս, որ համալսարանական բարձր ուսում ստացած երիտասարդներ, մի կողմ թողնելով իրանց անձնական շահերը, ուրախութեամբ նուիրում են իրանց գործունէութիւնը ճեմարանական գործին, երկրորդը որ ճեմարանի վարչութիւնը աշխատում է հետզհետէ ձեռք բերել համալսարանական կրթութիւն ստացած ուսուցիչներ: Այդ անհրաժեշտ է: ճեմարանի պէս լի էր բարձրագոյն, գոնէ բարձրագոյն ուսումնաւորներ անկարելի է տեղ տալ կիսաուսում անձինքներին, որոնք դուրի են մանկավարժական կրթութիւնից: Բաւական է, որ ճեմարանի ուսուցիչը ընդունակ լինի միայն յաջող կերպով աւանդելու իր առարկան. նա պէտք է լինի մի բարձր, ընդհանուր կրթութիւն ունեցող, հաստատ և ինքնուրոյն համոզմունքների տէր անձն, որպէս զի իր պաշտօնակիցների շրջանում պիտի չը ծռի ամեն մի ավտօրիտետի առաջ և ուսուցչական ժողովների կամ խորհրդակցութիւնների ժամանակ կը բաւարարական դեր չը խաղայ: ճեմարանի հիմնարկութեան վսեմ գաղափարը և բարձր նպատակը պարզ ցոյց են տալիս, որ նրա ուսուցչի գործունէութիւնը չը պէտք է սահմանափակվի միայն դասաւանդի պարտականութիւնը կատարելով, գոնէ ներկայումս, երբ ճեմարանական գործը դեռ մանուկ է և անկանոն, երբ նրա ուղղութիւնը դեռ շատ անորոշ դրութեան մէջ է, ճեմարանի ուսուցիչը, մեր կարծիքով, բաւական է, որ լինի միայն դասաւանդող, այն պէտք է լինի գործող, այդ բառի լայն նշանակութեամբ, պէտք է նպատակ իր մտաւոր և բարոյական ուժերով ճեմարանական գործին մի ուղիղ ընթացք և կանոնաւոր ուղղութիւն տալու խնդրին: Մի այն տեսակը ոչինչ չէ կարող անել. գլխաւոր դերը և մեծ գործ կատարողը ուսուցչական խումբը պէտք է լինի:

Պարզ է այստեղից, որ անգարագացած և ուսումնասիրող ուսուցիչը երբեք չէ կարող գործ առաջ առնել. օգնելու փոխարէն նա մինչև անգամ կը խանգարի իր գործունէայ ընկերներին, եթէ ամեն բանի մէջ խառնվի: Քանի որ ուսուցիչները մէկ մէկու չը հասկանան, մէկ մէկու չը գիտեն, ոչինչ չի գիտի զայ: Իսկ այդ համաձայնութիւնը կարող է լինել միայն այն ժամանակ, երբ ուսուցչական խումբը կազմված կը լինի արժանաւոր, զարգացած անձինքներից, ճեմարանին հարկաւոր են ուրեմն համալսարանական ուսում ստացած ուսուցիչներ:

Շատ ուրախալի է, որ ճեմարանի վարչութիւնը, ինչպէս լսել ենք, ոչ մի ջանք չէ խնայում այդ նպատակին հասնելու համար, և նրա ջանքերը առ այժմ պսակվում են յաջողութեամբ: Բայց չէ կարելի, ի հարկէ, հաստատա-

պէս ասել, որ ճեմարանը այսուհետև միշտ կունենայ արժանաւոր ուսուցիչներ. դեռ ավելի, այս նոր հրաւիրվածները ինչպիսի ընդունելութիւն կը գտնեն, կամ ինչքան ժամանակ կը կատարեն իրանց յանձն առած պաշտօնները: Գուցէ մէկը մնում է երկու տարի, միւսը մի տարի միայն, և ճեմարանը դարձեալ զրկվում է արժանաւոր ուսուցիչներից: Այս հանգամանքը ի նկատի ունենալով, վաղը պէտք է աշխատի այնպիսի միջոցներ գործ դնել, որոնք կարողանային մշտապէս ապահովել ճեմարանի համար արժանաւոր ուսուցիչներ:

Խօսանք այդ միջոցների մէկի վրա: Յայտնի է որ տարեկան մի նշանաւոր դոմար է դուրս գալիս վանքից, իբրեւ ուսման ծախս վանքի որդեգիրներին, որոնք սովորում են զանազան ուսումնաւորանքներում և գլխաւորապէս Լազարեան ճեմարանում: Մինչև այժմ այդ թոշակը, որ տեւում է մինչև զինադիական կուրսի վերջը, ոչինչ պարտականութիւններ չէ կապում որդեգիրներին հետ: Նրանք սովորում են վանքի հաշուով, վերջացում իրանց ուսումը և այնուհետև ընտրում այս կամ այն գործունէութիւնը իրանց ցանկութեան համեմատ: Վաղը այստեղ կատարում է մի հարուստ բարեգործ, որին նրա որդեգիրները ուսումնաւարտելուց յետոյ մարդատեղ էլ չեն դնում:

Ներկայումս, քանի որ վանքը ունի մի բարձրագոյն դպրոց, մի ճեմարան, որին մշտական հարկաւոր են լաւ ուսուցիչներ, մեր կարծիքով, վանքը կարող էր այն գոմարից, որ նշանակած է նրա որդեգիրներին, մի մասը գործ դնել աւելի խելացի և օգտաւէտ կերպով, որով նա կարող էր ապահովել ճեմարանի համար մշտական ուսուցիչներ:

Ահա ինչպէս. Ռուսաստանի բոլոր համալսարաններում կան զանազան հասարակութիւններից նուիրած գումարներ, որոնց տարեկան տոկոսից բաղկացած գումարը կազմում է մի քանի հաւասար ստիպենդիաներ համալսարանի այս կամ այն ֆակուլտետում: Բազմաթիւ ստիպենդիաներ ունի, օրինակ, մեր կովկասեան ուսումնարանական շրջանը համարեալ բոլոր համալսարաններում: Ամեն մի կովկասեան ստիպենդիատ ստանում է տարեկան 300 ռուբլ: Այդ ստիպենդիաները պարտաւորիչ են, այսինքն, ամեն մի ստիպենդիատ համալսարանի այս կամ այն ֆակուլտետում աւարտելուց յետոյ պարտաւոր է 4 տարեկան փոխարէն 6 տարի ծառայել իր կոչմանը համեմատ պաշտօններում այնուհեղ, ուր նրան կը նշանակեն. նա ծառայում է, ի հարկէ, Լոնդոնի Այսպիսով կովկասեան ուսումնարանական շրջանը երբեք պակասութիւն չէ զգում, օրինակ, ուսուցիչներում, որովհետև ամենայն տարի աւարտում են համալսարանի:

Գու չը գիտնան: Այդ կը լինի նրանց համար ամենամեծ բարոյական տանջանքը:

Կ. Պոլսի հայոց լրագրիչներին ցանկանում էր ամենից առաջ զատուցութիւն ունենալ իրանց գրվածների մէջ, որովհետև այդ ամենալաւ միջոց է Թիւրքիայի մայրաքաղաքում բոլոր բաժանորդները կորցնելու և վերջապէս լրագիրը փակելու համար:

Ռուսաստանում հրատարակվող բոլոր հայոց լրագրիչներին և ամսագրիչներին ցանկանում էր միշտ պաշտպանել հնացած և փտած մաքերը և երբեք ոչ մի նոր միջոց չընդունել, որովհետև այդ ամենահեշտ միջոց է քաղաքագլուխ հռչակվելու համար:

Բաղուրի Մարգարիտիկան Ընկերութեանը ցանկանում էր այնքան իր կանոնաւորութիւնը, որովհետև ընկերութեան խորհրդի անդամները թուով երբեք չեն գտնվում մարդիկ, որոնք ընդունակ լինէին իրադրոյել այդ կոնօնաւորութիւնը:

Թիֆլիս քաղաքին ցանկանում էր երբեք համալսարան չունենալ:

Ամբողջ Անդրկովկասում օրիորդական դպրոցներին ցանկանում էր մտցնել իրանց դասաւանդութեան գլխաւոր աւարականներ թուով Պոլսի Կոկի բռնաներ: Նոյնպէս ցանկանում էր նրանց մտցնել և կլասիկային ուսումը, որպէս զի օրիորդները քիչ ընկերութիւն անէին կլասիկային գիմնազիաների այն աշակերտներին, որոնք դժգոհութեամբ են նստած:

Ամբողջ հայոց ազգին ցանկանում էր միշտ հաւատարմի մնալ իր ազգային աւանդութիւններին և յատկութիւններին: Մասնաւոր միշտ պահպանել ամենաթանկագին ազգային յատկութիւնը, այն է ս և նա խանձը:

Ցանկանում էր մեր մեծ մեծ խօսող, դասաւոր:

րում նրա ստիպենդիաները և անմիջապէս պաշտօններ ստանում:

Չէ կարելի արդեօք, որ ս. Էջմիածին վանքը իննի Ռուսաստանի համալսարաններից մէկում մի քանի ստիպենդիաներ ֆիլոսոֆիական մատեմատիկական ֆակուլտետներում, Այդ միջոցը ամենահաստատուն է, որով ճեմարանը կարող է մշտական ունենալ այդ երկու ֆակուլտետներում աւարտած ուսուցիչներ: Ռուսաց լեզուի և գրականութեան, պատմութեան, հին լեզուների, մատեմատիկայի, ֆիզիկայի և բնագիտութեան: Ամեն մի հայ ուսանող որը իր ազգի շահերը բարձր է դառնում անձնական շահերից, մեծ ուրախութեամբ կը համաձայնվի ընդունել վանքի ստիպենդիան ճեմարանում ուսուցչութիւն անելու նպատակով: Վաղը ստիպենդիաները մի կողմից միջոց կը տան շատ երիտասարդների, նիւթական կողմից ապահովված լինելով, յաջողութեամբ պարագլու իրանց մասնագիտութիւններով, միւս կողմից կը կազմեն Էջմիածնի ճեմարանի համար ուսուցիչների մի հաստատ աղբիւր: Աւելորդ է աւելացնել, որ վանքի ստիպենդիաները պէտք է անպատճառ պարտաւորիչ լինեն, այսինքն ստիպենդիատը պէտք է պարտաւոր լինի ծառայել ճեմարանում որոշ տարիներ մի թիւ:

Այսպիսով ճեմարանը միշտ ապահոված կը լինի արժանաւոր ուսուցիչների կողմից, որոնց գործունէութիւնը միայն կարող է բերել ցանկալի պտուղներ, կարող է իրագործել այն միտքը, որի վրա է հիմնված այդ բարձրագոյն ազգային ուսումնարանը:

Ս. Կարեանց

ՆԱՄԱԿ ԱՅՍՊԱՆԱԿԻՑ

10 յունվարի

Մենք եւս ներկայ քաղաքական դրութեան պատճառով, առեւտրականների գործերը յաջող են դնում, աղքատների թիւը մեղանում բազմանում է: Արեւիգողութիւն, թղթախաղ, զեղի և անշափաւոր կենցաղաւարտութիւն, այս բոլորը նպաստում են դրա յաւաճանաւոր:

Մի անձ դժուար կը հասնէր իր նպատակին, եթէ չորերից կամենար որոշել այս կամ այն անձնաւորութեան նիւթական միջոցները:

Դիցուք թէ այսօր մի հարուստ թանկագին շոր է հագել, միւս օր շատերը սկսում են հետեւ նրա օրինակին չը նայելով որ իրանց դրամական միջոցները չեն թոյլատրում իրանց այնպէս վարվելու: Ինչ վերաբերում է կանանց, նրանց մասին խօսելն անգամ աւելորդ է: Նրանց զարգարվելու ցանկութիւնը ամենքին յայտնի է:

Կայրջիկ և ստրկահողի ինտելիգենցիային որ այդ սրբին դասաւարդի ներկայացուցիչները սաստիկ հարստանան, որովհետև միայն այն ժամանակ կրեակայ լի է ինչպէս կը գործ դնեն նրանք իրանց ձեռք բերած կարողութիւնը և ինչ զին ունէին նրանց մեծ մեծ խօսքերը:

Կրկին մի ցանկութիւն «Օճօր» լրագրիչ: Ցանկանում էր նրան որ բացի այն բաժանաղից, որ նորերումս այդ լրագրի մէջ մի նամակ է տպել, «Օճօր» ոչ մի ուրիշ ստորագրող չունենայ:

Ուրեմն բաղաւոր նոր տարի ամենքին: Կարծեմ ամենքը զոհ են, ում են բարեմաղթել եւ քաղաւոր նոր տարի:

Յոյս ունեմ որ եթէ ամենքը, ում են ցանկութիւններ եւ յայտնել, կաշխատեն իրադրոյել ներկայ 1879 թին իմ բարեմաղթութիւնները ամենքը բաղաւոր կը լինեն և մեր երկիրը շատ առաջ կերթայ:

Ի հարկէ կան իմ օրախ մէջ և շատ ուրիշ ցանկութիւններ, որոնց եւս դժբաղդապէս իրաւունք չունեմ յայտնելու:

Յեկեղեցիայ այս անգամ կարճ եղաւ, բայց և նոր տարվայ վիդիտները միշտ կարճ և պաշտօնական են լինում:

Նա ուրեմն վերջացրի իմ վիդիտներս և այժմ կրկին կարող եմ սկսել իմ սովորական, առօրեայ կեանքը:

Մի խորհուրդ էլ ուղում էի տալ «Մշակ» ընթերցողներին: Միւս տարի փոխանակ նոր տարվայ վիդիտներն անելու, խորհուրդ եմ տալիս որ ամեն մի հայ մի մի փոքրիկ դոմար նուիրի յօղուտ որ և է հայ բարեգործական հիմնարկութեան, ընկերութեան, կամ ուսումնարանի:

Ասիացի

Ամսին 5-ին, ծննդեան ճրագույնցի՝ օրը, մեր քահանայներից մինը, ըստ սովորութեան յայտեց ժողովրդին աղքատաց զանաանակների արդիւնքը:

Նա ասաց որ նոյններէ 14-ից մինչև այդ օրը, արանց զանաանակում հաւաքվել է 242 բուրբ, իսկ կանանց՝ մի փաթեթով 20 բուրբ և զանազան արծողութեան ոսկիներ, (զուամարը անորոշ մնաց մեզ համար): Նա աւելացրեց որ այդ փողերը բաժանվել են քաղաքիս չքաւոր զերդաստաններին, որոնց թիւը 46 է: Այդ թիւը մեզ զարմացրեց: Միթէ կարելի է, մտածում էինք որ մի այսպիսի փողերի քաղաքում այդքան աղքատներ լինէին: Մեզ յայտնի է որ կան աղքատներ, որոնք իսկապէս կարօտ են ողորմութեան, կան նմանապէս և այնպիսի աղքատներ որոնց աղքատ անուանելը և փող բաժանելը, նշանակում է քաջակերել ծուլութիւնը և իսկական կարօտեալներին հասնելը բաժնից անխճօրէն զոգանալ:

Մեր մէջ ընդհանրացած է մի առած, որին շատերը հետեւում են. «Տուր ոսկի գօտեորին, մի ըննիր», բայց ոչ, մենք պարտական ենք ըննելու և կարծեցեալ աղքատը իսկականից որոշելու: Յանկանում ենք որ այն անձինք որոնք բաժանում են այդ փողերը, սրանից յետոյ աչքի առաջ ունենային այդ պարագան: Այժմ նրմանապէս շատացել են ասորի մօրացկաւորները: Ամեն մի ուրուքաւոր, երկար ֆարաշէն հագած ասորի, քահանայ և անուանում իրան, մի փաթեթով արաբերէն աւետարանը կողքի տակ և մի քանի հայ եկեղեցական աղօթքներ անգիր արած ողորմութիւն է հաւաքում: Իրանց աշխարհական մօրացկաւորների թիւ ու համարը չը կայ:

Տեսնում էք քաջակամ, ուժեղ երիտասարդներ, որոնք ողորմութիւն են հայցում, դուք առաջարկում էք նրանց մի որ և իցէ աշխատանք, նոքա էլի ողորմութիւնն են կրկնում:

Ինչպէս անցեալ նամակումս կարծիք էի յայտնած, ուսումնարանի կրպակների կապալը մնաց այն անձի վրա որը 2,500 բուրբու հաշով գրաւ էր ներկայացրած հողաբարձութեանը: Արհեստաւորի մինը մնում է եկեղեցապատկան կերպակներից մինի մէջ: Այս օրերս եկեղեցական երեսփոխանը առաջարկում է նրան դուրս գնալ կրպակից, արհեստաւորը առաջարկում է 150 բուրբ վարձ, միայն թէ դուրս չը գալ կրպակից: Մանաւանդ որ կրպակների մեծ հարկաւորութիւն կայ և այն դէպքում եթէ վարձէր կապալաւորից ուսումնարանապատկան կրպակներից մինը, հարկաւորված կը լինէր դատարկ կրպակ չը լինելու պատճառով համարեա մօտ 2 ամիս ման գալ պարագայ:

Բանը յայտնվում է այսպէս: Երեսփոխանի օրդին մնում է մեր քաղաքացի պարոններից մինի կրպակի մէջ, այդ պարոնը պահանջում է դատարկել իր կրպակը, երեսփոխանը առաջարկում է նրան եկեղեցապատկան կրպակներից մինը, այն որի մէջ մնում էր արհեստաւորը: Պարոնը ասում է որ ինչ որ գնահատելու լինի եկեղեցապատկան կրպակը, իրը նրա արժողութեան երկպառակը կը գնահատէ:

Երեսփոխանը խորամանկութիւն է բանացնում, եկեղեցապատկան կրպակին միայն 40 բ. վարձ է նշանակում որպէս զի ինքը 80 վճարէ նրան:

Արդեօք ինչ իրաւունքով այդ պարոնը կամենում է իր վրա թողնել այդ կրպակը և 110 բուրբ իր զբաղման թողնել: Միթէ բաւական չէ որ հասարակութիւնը այնքան միամիտ է որ հաշիւ չէ պահանջում նրանից, որ ոչինչ կօտորօղ չէ նշանակված նրա գործողութեանց վրա: Այդ մասին, ինչպէս լսում ենք, արհեստաւորը տեղեկացրել է գործակատար քահանային և յոյս ունենք որ վերջինս չի թողարկի այդ տեսակ կամայականութիւններ:

Մեր հարուստներն ևս բնութեան օրէնքների համեմատ են գործում, որտեղ զօրեղ տկարին ոչնչացնում է:

Ջալալեան Ռուբէն 11 բ., Բալանթարեան Նիկողայոս 3 բ., Աթաբեկեան Ներսէս 3 բ., Բէգնազարեան Սարգիս 3 բ., Գալուսեան Սարգիս 5 բ.:—Ընդամենն է 65 բուրբ:—Ուղարկելու ծախսը հանած է այդ գումարից:

Խնդրում եմ խնարհաբար այդ գումարը պատկանած տեղը հասցնելու ներկութիւնը յանձն առնէք ձեր վրա:

Վասիլ Եղիազարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեր թղթակիցը հեռագրում է ԳԱՆՁԱԿԻՑ. «Յունվարի 14-ին այստեղ կատարվեցաւ կարապետ Տէր-Ներսէսեանի հարսանիքը օր Մ. Նաբաթեանի հետ. Առաջինի եղբայր Ներսէս Տէր-Ներսէսեանը և երկրորդի հայր Պետրոս Նաբաթեանը կամենալով այդ օրվայ համար մի բարեգործութիւն անել, ընծայեցին իւրաքանչիւրը հարկւրական բուրբ յօգուտ Վանի և Տարօնի ուսումնարանների: Հարսանիքին ներկայ գտնվող հետեւեալ անձինք նոյնպէս նուիրատուութիւն արին: Աւետիք Մալեանց 50 բ., Թումանեանց 5 բ., Վ. Յովսէփեանց 10 բ., Մ. Գալուսեանց 5 բ., Մ. Աղալեանց 5 բ., Շահլամեան 2 բ., Ռամանոյ Զարուիւնեան 1 բ., Տէր-Գեորգեան 1 բ., Վարդանեան 1 բ.: Բոլորը 280 բ.: Ստորագրութիւնը շարունակվելու է: Բացի այդ Տէր-Ներսէսեան և Նաբաթեան նուիրեցին տեղական հոգեւոր ուսումնարանին յիսուական բուրբ իւրաքանչիւրով:

Մեզ հաղորդում են ՎԵՐԻՆ-ԱՊՈՒԼԻՍԻՑ, որ այնտեղ զանազան երեխայական հիւանդութիւններ են տարածված: Մանաւանդ փողացաւ հիւանդութիւնը շատ զոհեր է տանում:

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի երկու միմեանց թշնամի կուսակցութիւնները, Սուքիասական և Տէր-Յովսէփեան հաշովել են միմեանց հետ, Նաւակազիւրը այդ առիթով իր ուրախութիւնը յայտնում է:

Մեր ԵՐԵՒԱՆԻ թղթակիցը մեզ հեռագրում է. «Հոգեւոր ուսումնարանի հինգ ուսուցիչները տեսչի անտեսելի և կոպիտ վարմունքի պատճառով մի զեկուցումն ներկայացրին հոգաբարձութեանը և հրաժարական տուին»:

Յունվարի 16-ին առաջին անգամ ձին եկաւ ԹԻՖԼԻՍԻՄ: Բայց ցուրտը սաստիկ չը լինելով, ձինը մնում է միայն անների կոտորների վրա, իսկ փողոցներում հալվում է և անանցնելի ցել է գոյացնում:

Այս տարի «Մշակ» բաժանորդութիւնը շատ լաւ է գնում: Անցեալ տարի տարվայ վերջում մենք ունէինք 900 բաժանորդ, իսկ այս տարի յունվարի 15-ին մենք ունէինք արդէն 700 բաժանորդ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Անցեալ պատերազմական, ծանր տարին անցաւ: Ինչպէս է հանդիպում արեւմտեան եւրօպան նոր տարին, ներկայ 1879 թիւը: Գցենք մի անցաւոր հայեացք արեւմտեան եւրօպայի զիւսուոր պետութիւնների վրա:

Գերմանիան կարծես բոլորովին թողել է իր հոգիները ընդհանուր եւրօպական շաղաքական գործերի զեկավար լինելուց և պարապում է միմիայն իր նեղ, ներքին գործերով: Նրան զբաղեցնող զիւսուոր խնդիրը սօցիալիստների խնդիրն է: Կառավարութեան և ազդիւ աւերող ուշադրութիւնը գրաւված է սօցիալիստական ուղուականի դէմ կուեկով: Ուրիշ ոչինչ չէ լսվում այնտեղ, եթէ ոչ որ այս ինչ անձն կալանաւորվեցաւ, կամ աքսորվեցաւ: Եղբայրաբար զէպի զաւառները, այն ինչ լրացիր դատի կանչվեցաւ կամ արգելվեցաւ: Գերմանական քաղաքական կեանքի մէջ յայտնվող ուրիշ խնդիրներ վարչական թէ անտեսական, ոչ զբին չեն հետաքրքրում:

Ի տալիս նոյնպէս յուզված է սօցիալիստական և հանրապետական խուլ շարժումը ներով: Թէ Իտալիան և թէ նոյնպէս Սպանիան գեռ գտնվում են այն ծանր տագնաւութեան տակ որ գործեցին այդ երկու երկրներին հասարակական կարծիքի վրա նրանց թագաւորների դէմ կատարված եղեւնագործութիւնները:

Աստիճան մի նոր ընծայ ստանալով, պալատական երկիրները, անդադար ներքին յուզման մէջ գտնվելով իր երեք զիւսուոր տարրերի՝ ունգարացիների, սլավոնների և գերմանացիների անհաշտ յարաբերութիւններ և երկպառակութիւնների շնորհով, իրան աւելի ուժեղ չէ զգում քան թէ առաջ, այլ ընդհակառակն նրա քաղաքականութիւնը աւելի տատանվող է դարձել քան թէ առաջ: Աստիճան չը գիտէ ում հետ բարեկամանայ, ում աւելի մօտենայ՝ Ռուսաստանին, թէ Գերմանիային:

Բելգիան հանդիպում է նոր տարին շատ տխուր կերպով: Սարսափելի հեղեղներ աւերում են այդ երկիրները:

Թիւրքիան գտնվում է կատարեալ քայքայման մէջ: Նրա թէ եւրօպական և թէ ասիական դաւաճներում անիշխանութիւնը հասել է վերին աստիճանին: Ամեն տեղ ճնշում, բռնաւորութիւն, անիշխանութիւն, կամաւայականութիւն, ժողովրդի չքաւորութիւն, — ահա Թիւրքիայի դրութիւնը: Կ. Պոլսում լարված դրութիւնը այնտեղ է հասել, որ ժողովուրդը հաց չունի ուտելու, յուզվում է փողոցներում: Թիւրքիան կորցրել է իր վերջին կրեդիտը, նրա փողերը կատարելապէս ընկել են: Մինիստրները փոխվում են գրեթէ ամեն ամիս, բայց երկրի անիշխանութիւնը նոյն է մնում:

Գուցէ ամբողջ արեւմտեան եւրօպայից Ֆրանսիան միակ երկիր է որ հանդիպում է նոր տարին գոհ և զուարթ դէմքով: Նա հասել է իր նպատակին, նա կարողացել է կատարելապէս հաստատել իր մօտ պետական այն ձեւը, որին ձգտում էր, և որին հասել էր այդքան զոհաբերութիւններով: Վերջին սեռնաւորական ընտրութիւնները բուն հանրապետական բնաւորութիւն ունեն և իրաւունքով կարծել են տալիս որ այսուհետեւ հանրապետութեան ձեւը հաստատ և խոր արմատներ կը գցի Ֆրանսիայի հողի մէջ: Մինչև այժմ պատգամաւորների ժողովը հանրապետական էր, բայց սենատը հակահանրապետական էր: Այդ պատճառով երկու ժողովների մէջ միշտ լինում էին երկպառակութիւններ և նրանք մի զարմանալի հակասութիւն էին ներկայացնում: Այժմ անշուշտ կը լինի կատարեալ ներգաշխակութիւն երկու ժողովների մէջ:

Ուրեմն եւրօպայի երկիրներին մեծ մասը բացի Ֆրանսիայից, շատ միեմարական տըրամադրութեան մէջ չեն: Աւելացրէք սրան այն լուրը որ այս օրերս հասնելով եւրօպայ, որքան կարելի է եզրակացնել եւրօպական լրագիրներից, մի տեսակ պանիկա, երկիւղ պատճառեց եւրօպայում: Ռուսաստանի ներքին զաւառների մէջ յայտնված ժանտախոր բաւական անախորժ լուր էր արեւմտեան եւրօպայի համար:

Ճշմարիտ է նոյն իսկ Ռուսաստանում բաւական ճիշդ հետազօտված չէ ասիական բնաւորութիւնը, մի քանիսները հաւատացնում են որ դա ժանտախոր չէ, այլ միայն տիֆ է, — բայց այնու ամենայնիւ արեւմտեան եւրօպայում արդէն սկսել են գործ դնել ամեն տեսակ միջոցներ, որպէս զի ցաւը չանցնի այնտեղ Ռուսաստանից:

Վերջապէս ի՞նչ բերեց իր հետ նոր տարին Անգլիայի համար: Անգլիան ցոյց տուեց իր ոյժը և Հնդկաստանում և Թիւրքիայում և Աֆգանիստանում: Բայց նրա արտաքին փառքը անգործ կըլաւ բուժել Մեծ-

Բրիտանիայի, նոյն իսկ Անգլիայի բուն անդլիական աղքատեալութեան հասարակական ցաւերը: Ամբոխի աղքատութիւնը, գործարանների բանտների անմիջեմար անտեսական դրութիւնը, — ահա ինչ է բացվում Անգլիայի արտաքին փառքի վարագոյրի ետեւից:

Մեր թիւրքիական եղբայրակիցների վերաբերութեամբ Անգլիան հանդիսացաւ կամ խաբեայ, կամ անգոր, դժուար է որոշել երկու ածականներից որն աւելի յարմար է յատկացնել Անգլիային նրա վարմունքի մէջ թիւրքիական հայերի վերաբերութեամբ: Մէկ բան հաստատ է, որ այն ժամանակից, երբ Մեծ-Բրիտանիան մեկնեց իր հովանաւորող ձեռքը դէպի Փոքր-Ասիան և դէպի Հայաստանը այդ երկիրների քրիստոնեայ աղքատեալութեան, մանաւանդ հայերի դրութիւնը աւելի վատացաւ, աւելի անտանելի դարձաւ:

Գ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Դարեմից մեզ գրում են. «Սլաւաստում պարսկիները բռնութեամբ ստիպել են մի հայ օրիորդի մահմետականութիւն ընդունել, նոյն բանը օրերումս այստեղ պատահեց: Այս անցքերի վրա ոչ հասարակութիւնը և ոչ կառավարութիւնը ուշադրութիւն չը դարձրին»:

ՄԵՄԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՆԵՐՑ

ԲԵՐԼԻՆ, 15/27 յունվարի: Այստեղ վրձնված է անպայման փակել սահմանը և ութսուն հազար զօրք կանգնացնել հսկողութեան համար: Կարծում են, որ այդ միջոցները կարգեկն ժանտախորն հասնել Գերմանիա Ռուսաստանից և կը ստիպեն այս պետութեանը աւելի զեծումներ անել մաքսական տուրքի վերաբերութեամբ:

ՓԱՐԻՉ, 16/28 յունվարի: Հաւատացնում են, որ մինիստրների այսօրվայ առաւօտեան խորհուրդի ժամանակ Մակ-Մահօն յայտնեց, թէ նա աւելի շուտ հրաժարական կը տայ, քան թէ զեծումն կանի բարձր հրամանատարութեան պաշտօնների վերաբերութեամբ:

ԲԵՐԼԻՆ, 16/28 յունվարի: Բայխատաղ հրաւիրված է հաւաքվել փետրվարի 12-ին, Այսօրվայ խորհուրդը քննեց ժանտախորի դէմ գործելու միջոցները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ Վեռլանկում վանձնակցեալ զիւսութեան քոյր Դօբրինինա: Բժիշկ Կրասովսկու զեկուցման համեմատ այդտեղ հիւանդներ այլ ևս չը կան: Աստիճանի նահանգապետը յայտնեց բոլոր զիւղերում, որ այրված իրեղէնների փոխանակ բժիշկի և պօլիցիականների պահանջի համեմատ կը արվեն սպիտակիղէն և շորեր: «Перед. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ բժիշկ Բօսկին յայտնել է, թէ Ս. Պետերբուրգի մէջ տարափոխիկ ջերմ կայ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Պետական բանկի 50% տոնակը առաջին շրջանի արժէ 95 բ. 62 4., երկրորդ 94 բ. 75 4., երրորդ 95 բ., չորրորդ 95 բ., ներքին 50% առաջին փոխառութեան տոնակը արժէ 230 բ., երկրորդ 231 բ., արեւելեան առաջին 92 բ. 25 4., երկրորդ 91 բ. 75 4., ոսկին 8 բ. 60 4.: Ռուսաց 1 բուրբ 1 ծնողունի վրա արժէ 23 1/8 պէնս, ռուսաց 100 բ. Գերմանիայի վրա 196,25 մարկ, Փարիզի վրա 242 ֆր. 50 սանտ: Տրամադրութիւնը ամուր է:

Խմբ. Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

В А К У

ԿՈՎԱՍՍՈՒՄ ԵՒ ԱՆԿՐԿՈՎԱԿԱՍՈՒՄ ՄԻԱԿ
ԴԵՊՈ արժարժած, և ոսկեզոցած իրեղեն-
ները, (սեղանի, թեյի և այլն) Կրիստոֆլե և
ընկ. (Christofle et Co.) գտնվում է Փիլիպպոսի,
Տոլլերի խանութ, Սոլոլակի № 4:

2—6

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՌՐ ՐԱՅԳՐՐՈ-
ԴՍԿԻ ստացել է մեծ քանակությամբ հա-
յկենների ապակիներ զանազան մեծու-
նների Ընդունում է պատուերները չափազանց
էական գներով: Նորոգում է հին և փայցած
հայկեններ: Հայկենները ծախվում են շրջա-
նակներով և առանց շրջանակների: Առա-
մանակալա փողոց, փոստի շենութեան մեջ,
տուն Լորիս. Մեղեքովի:

2—4

ԵՐԴՈՒՆԱԼ ՀԱՌԱՏԱՐՄԱՏԱՐ Բերնար Իլի
Միրովի, որ բնակվում է Արսենալայա Դա-
րժակայա փողոցների անկյունում Միրովի տա-
նը, ԸՆԴՈՒՆՈՒՄ է գործերի համար և առա-
տեան 8-10 ժ. և երեկոցան 5-7:

2—3

Լոյս տեսաւ պ. ՅԱՐՈՅԻ բրոշերը—ՀԱՅՈՑ
ՄԱՄՈՒԼԸ Ռուսաստանում և Կովկասի մեջ:
Գինն է 30 կոպ. ծախվում է Փիլիպպոսի ԲՈ-
ԼՈՐ գրավաճառների մոտ:

2—4

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՆԻ
ՊԼԱՏՐԱՍԻ ՀԱԳՈՒՍՏՆԵ-
ՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՎԱՆ-
ՆԵՆ ՀԱՐՑԱՐԱՐՈՒ ՎԱՐՑ
ստացվել են մեծ քանակությամբ Ֆրանսիայի
ՏՐԻԿՈՒ ՍԻՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐՏԵՐ, որոշրդական
ԱՌԱՌՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱՆՏՆԵՐ և
ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեկոցային հագուստներ, ՎԵ-
ԲԱՐՎՈՒ—ԱՎԱՏՆԵՐ զարդերով, նոյնպես ըն-
դունվում են ՊԱՏՆՈՒՆԵՐ զենուորական և
քաղաքական հագուստների համար: Յոյս ու-
նեմ, որ ինչպես պատուիրորդները նոյնպես է
գնողները ԲԱՆԱԿԱՆ ԿԸ ՄԵՆԱՆ:

26—75

РАСПРОДАЖА БЕЗЪ ЗАПРОСА.

По случаю прекращения розничной
торговли и открытия оптового склада,
назначается распродажа по самым де-
шевым ценам, на 25% дешевле обы-
кновенных цен, товаров: кресть, ар-
дагань, матласе, репс, фый, карс, кь-
руас, кашемир, черны отъ 15 к. до
2 р. 30 к. альпага черны отъ 35 к. до
75 к. шали суконны отъ 3 р. 25 к. до
7 р. 35 к., ковры бархатные, тикъ хол-
щевый, рубашки полотняныя, и т. п. Въ
каравансараѣ Тамашева, верхній этажъ,
противъ гостиницы Кавказъ, №№ 10 и 11
магазинъ Малакова.

1—4

ԳԵՂԱՐՈՒՆԱՍՏՈՒՆ ՀԱՆՈՒՄ

որ գտնվում էր Գոլովինսկի պրոսպեկտի վրա
Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՈ-
ԼՈՎԻՆՍԿԻ պրոսպեկտի վրա, ՇԻՌՆՎԻ տանը,
Գերմանական կրթի և Վեյտլի ֆոտոգրա-
ֆիայի մոտ մի և նոյն սանդուղքով: Այցե-
ողները համար բաց է ԱՄՆԵ ՕՐ առաւօտեան
9 ժամից մինչև երեկոցան 5 ժամը: Հաւա-
քածուրն ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած:

21—25

ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍՈՎԻ խանութում, Կատարի-
չեկայա փողոցի անկյունում, Շիռնվի տան հան-
դէպ ՍՍՍՅՎԱՍԵՆ ԵՆ տոները համար ՄԵՆ քա-
նակությամբ ամենազեղեցիկ ՆՈՐ ձևերի ԲԻ-
ԼԻԱՆՏԻ, ԱՐՄԱԹԵ և ՈՍԿԱՑ Իրեղեններ, նոյն-
պես ժենեվյան ժԱՄԱՑՈՑՆԵՐ: Իսկ այդ
խանութի կարգում ՍՍՍՅՎԱՍԵՆ Ե. Ս. Պոպո-
վի ԹԵՅԻՑ 5000 ֆունտ: Թեյի ֆունտը արժէ 1
ր. 40—3 ր.: Վաճառականներին զեղչում կանվի:

4—4

ДВУИЦА ищетъ мѣсто КОМПА-
НИОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ:
Старокатолическая улица, домъ Чико-
вани № 10

Մէկ ՕՐԻՈՐԻ ցանկանում է ընկերակցու-
կամ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՈՒՆԶՈՒ պաշտօն ունենալ:
Հասցեն, Ստարոփառքիչեկայա փողոց, տուն
Զիգովանի, № 10

ОБЪ ИЗДАНИИ

ВЪ 1879 ГОДУ ВЪ ВАКУ

ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р. на три
мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во все города имперіи на
годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.
Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милотинской улицѣ
близъ гостиницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.
Изгородные адресуютъ свои требованія исключительно: Въ Баку, въ редакцію
Бакинскихъ Извѣстій.

ОБЪ ИЗДАНИИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году *Тифлисскій Вѣстникъ* будетъ издаваться
ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по
прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ кон-
торѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

НА ГОДЪ. НА ПОЛГОДА:

Въ Тифлисѣ, безъ доставки. . . 10 р. 5 р. 50 к.
» съ доставкой. . . 11 » 6 »
Съ пересылкой по Имперіи. . . 12 6 » 50 »
За границу по почтовому союзу. 15 8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тиф-
лисѣ въ редакцію *Тифлискаго Вѣстника*.

ՅՈՒՆԻՎԱՐՍԻ 18

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍԻ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Յունվարի 17-ին)		ՀԱՆՈՒՄ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ- ՌՈՒՂԻ		ՓՈՍՏ		ԲԺՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	
Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.
Ոսկի (գործարարական)	8	53	Կովկասի և Ան-			Ամեն տեսակ թե՛ նա-		Հիւսիսային ընդունելու-		— ԵՐԵՎԱՆ. Վ. Ե. Ստացանք	
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1630	—	դրվածքի քա-			թե՛ ծանր փայտ ամեն տեղ		թե՛ ծանր փայտ ամեն տեղ		64 բուրլ յոգուտ «Արարատեան	
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1320	—	ղաքները	1		ուղարկելու, ընդունվում		Երկու շաբաթի. Լիտ-		ընկերութեան:	
Վերջինի 50/0 առաջի փո-	233	—	(Խուսափում)	2		են ամեն օր, առաւօտեան		ցի և Գորաբիլի ներքին		— ԲԱՐՎՈՒ. Խ. Բ. Մ. Ստա-	
խառնութեան տոմ. 100 »	229	—	(Առաւօտ)	3		3 ժամից մինչև 7 և կէսօրից		հարաւորութեան, Բաղստ		ցանք 350 բուրլ ու փոխա-	
Երկրորդ 50/0 վերջինի »	100	—	(Առաւօտ)	4		յետոյ 3 ժամից մինչև 7.		կան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Մարտի կուրսը 245—	100	—	Ֆրանսիա	2	88	Իսկ կիրակի օրերը հասա-		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Լոնդոնի կուրսը Օղեսայի	10	30	Ֆրանսիա	3	75	րակ նամակներ մինչև 10		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
վրա	100	—				ժամ առաւօտեան և 3—7		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Վենայի կուրսը ամէ 121 զ.	5	80				երեկոցան:		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Դաւրթի բարձր.	315	—				Առաւօտ ամեն օր և		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Առաւօտեան բանկի ալ-						Միջառիւծ.		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
ցիան 200 մ.						Միջառիւծ.		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Փոթի Թիֆլիսեան երկա-						Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
թուղու ակցիան 125 մ.	102	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Շաբաթը բրոցիլու . . .	7	40				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
» միւս տեսակը . . .	7	30				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
» շաբաթաւոր . . .	6	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
» արանդիտը . . .	6	80				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
» մարքի փճարած . . .	12	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Բաժնեւոր Երևանու Ա-						Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
մերկայի սերմից . . .	7	40				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Միւս տեսակը հին սերմից . . .	6	70				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Բուրլը Թուրք . . .	8	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
» Թարաքամի . . .	4	10				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Աւիւր Դարաքալու . . .	1	80				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
» Երևանի . . .	—	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Գարին . . .	1	30				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Մամբ բնաճարայի (сгар.)	12	60				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Մեռած և Երևանի . . .	190	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Կախ Երևան . . .	140	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Կոկոնը Երևանի (բոժ.)	40	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Ֆրիզոնը (լաւ) Ագու-						Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
լիաց . . .	55	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Կոֆէն մոլոր . . .	27	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
Կիւլանի . . .	23	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	
մարտի 17-ին	19	—				Փոթի . . .		ղան և կանանց հիւսա-		ղաքի 350 բուրլ ու փոխա-	